

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Մյունիք Թաղնույան

Ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում առաջ են գալիս յուրաքանչյուր ազգի ու պետականության գոյատևմանը և մրցունակ զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ վտանգներ և սպառնալիքներ: Այս պայմաններում պետությունը որպես քաղաքական համակարգի կենտրոնական ինստիտուտ, որի վրա է դրված ազգային անվտանգության ապահովման պատասխանատվությունը, պետք է կարողանա ձևավորել համապատասխան ինստիտուցիոնալ համակարգ՝ հստակեցված գործունեության ուղղություններով: Հողվածում ներկայացված է ազգային անվտանգության (ԱԱ) ապահովման ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման մոտեցում՝ հիմնված ազգային անվտանգության ապահովմանն անհրաժեշտ գործառույթների համապատասխան ինստիտուտների միջև օպտիմալ բաշխման վրա:

Հայաստանը, աշխարհաքաղաքական առումով գտնվելով բարդ տարածաշրջանում՝ հյուսիսի և հարավի, արևելքի և արևմուտքի խաչմերուկում, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի շահերի կիզակետում, կրում է այդ շահերի համադրման ու մրցակցության ազդեցությունը: Այժմ Հայաստանում պահպանվում են անցումային շրջանին բնորոշ զարգացումները՝ ստեղծելով բազմաթիվ ներքին և արտաքին խնդիրներ: Նման իրավիճակում ՀՀ ԱԱ-ի համար ծագում են սպառնալիքներ, և ի հայտ է գալիս դրանց բացահայտման ու հստակեցման, ինչպես նաև առաջնահերթությունները որոշելու անհրաժեշտություն: Նշված խնդիրների լուծման համար պետական մարմինները, իշխանության բոլոր օղակները և հասարակությունը պետք է վարեն համակարգված կառուցողական գործունեություն: Կարևորելով այս մոտեցումը՝ պետք է նշել, որ միայն միահամուռ ուժերով կարելի է ապահովել երկրի կայուն զարգացումն ու անվտանգությունը [1]:

Երբ պետական կառավարումը դիտարկվում է որպես ազգի ու պետականության գոյատևման և մրցունակ զարգացման համար ազգային ռեսուրսների համախմբմանն ու կոորդինացմանն ուղղված գործունեություն, կարելի է ասել, որ ԱԱ սպառնալիքների վերհանման ու դրանց դիմակայման միջոցների, ինչպես նաև ազգի անվտանգ, կայուն և ժողովրդավարական զարգացման

ապահովման ուղղությամբ պետության գործունեության հիմնադրույթները մշակվում և ներկայացվում են *ԱԱ* ռազմավարությունում:

Մեր կարծիքով՝ *ԱԱ* ապահովումն անհրաժեշտ է դիտարկել որպես միասնական համակարգային գործընթաց, որի առանձին բաղադրիչների իրականացման հիմքում պետք է ընկած լինի *ԱԱ* ռազմավարական նպատակների իրագործմանը նպաստելու սկզբունքը: *ԱԱ* ապահովման համար անհրաժեշտ բոլոր գործառույթները պատշաճ իրականացնելու համար պետությունը՝ որպես քաղաքական համակարգի կենտրոնական ինստիտուտ, պետք է ձևավորի համապատասխան ինստիտուցիոնալ համակարգ՝ հստակեցված գործունեության ուղղություններով և գործառույթներով, որի առանձին բաղադրիչները պետք է ունենան բավարար մակարդակի մարդկային, վարչական, ֆինանսական, ինչպես նաև գաղափարական ներուժ:

Հիմնվելով այն սկզբունքի վրա, որ նշված համակարգը և դրա գործունեության ուղղությունները բխում են *ԱԱ* հիմնախնդիրներից, անհրաժեշտ է նշել, որ այն չպետք է լինի ստատիկ և նրա կազմի ու կառուցվածքի, ինչպես նաև գործունեության ուղղությունների փոփոխությունները պետք է թելադրված լինեն *ԱԱ* հիմնախնդիրների փոփոխություններով ու առաջնայնություններով:

Անդրադառնալով *ԱԱ* կառավարման և, մասնավորապես, վերջինիս ապահովմանն անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնահարցերին՝ նախևառաջ անհրաժեշտ է նշել, որ կապված 2007թ. փետրվարի 7-ին ՀՀ Նախագահի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» ընդունման հետ՝ ՀՀ *ԱԱ* ապահովման գործընթացը տեղափոխվեց որակապես նոր հարթություն [2]: Անհրաժեշտ է նշել նաև հայ մասնագետների կողմից նշված ռազմավարության ինքնուրույն միջգերատեսչական մշակման հաջող փորձի և ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրոպայի առաջատար մասնագիտական կենտրոններում փաստաթղթի համակողմանի համաձայնեցման գործընթացի նկատմամբ ժամանակակից պահանջների պահպանման կարևորության մասին: Արդյունքում՝ *ԱԱ* ռազմավարության մշակման ժամանակակից մեթոդաբանությունը հնարավորություն ստեղծեց զուգահեռ մշակել նաև *ԱԱ* ապահովմանն անհրաժեշտ ռեսուրսների օպտիմալ բաշխմանն ուղղված գերատեսչական ծրագրերի փաթեթ: Նշենք նաև, որ մինչ փաստաթղթի ընդունումը պետական կառավարման գործընթացները մեծ մասամբ իրականացվել են տվյալ ոլորտում բարեփոխումների իրականացման տեսանկյունից՝ չունենալով *ԱԱ*-ի առջև ծառայած հիմնախնդիրների լուծման հստակ ուղղվածություն:

Ինչպես հայտնի է, Եվրոպական երկրներում *ԱԱ*-ին վերաբերող կարևորագույն փաստաթղթերի մշակումը երկու հիմնական փուլերից բաղկացած գործընթաց է: Առաջին փուլում մշակվում է հայեցակարգ, որը, համաձայն ՆԱՏՕ մասնագետների, պատասխանում է «*ի նչ*» հարցին: Այնուհետև, հայե-

ցակարգի հիման վրա մշակվում է ռազմավարություն, որը պատասխանում է «ինչպե՞ս» հարցին: ՄՄ ռազմավարության մշակման ամերիկյան ժամանակակից մեթոդաբանությունը ենթադրում է համակարգային մոտեցում «ի՞նչ» և «ինչպե՞ս» հարցերի լուծման գործընթացին: Հայաստանն ընտրել է ՄՄ ռազմավարության մշակման վերը նշված դինամիկ մոդելը, որն ուղղված է ոչ միայն սպառնալիքների և դրանց հակադարձման վերաբերյալ մոտեցումների ու հայացքների համակարգմանն ու տեսականացմանը, այլ նաև Հայկական պետականության և ազգի կենսունակության ու կայուն զարգացման ապահովման առաջնայնություններին:

Այսինքն՝ կարելի է ասել, որ ՄՄ արդյունավետ կառավարման տեսանկյունից նշված ռազմավարության ընդունումը ՄՄ ապահովմանն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար քայլ է հանդիսանում: ՄՄ ապահովումը ենթադրում է նաև պետական կառավարման առկա ինստիտուցիոնալ համակարգի և դրա կառուցվածքի կատարելագործում՝ համապատասխանեցնելով վերջինիս գործունեության ուղղություններն ՄՄ ռազմավարությունում ամրագրված հիմնադրույթներին: Ներկայումս, ի կատարումն «ՄՄ ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի (ՆՀ-37-Ն), ՀՀ կառավարությունը սկսել է ՄՄ ռազմավարության ապահովմանն ուղղված պետական գերատեսչությունների իրականացնելիք գործողությունների ծրագրերի մշակման և հաստատման գործընթացը:

Այս պայմաններում անհրաժեշտություն է առաջանում մշակել գործիքներ, որոնք հնարավորություն կտան դիտարկել ՄՄ կառավարման համար անհրաժեշտ ինստիտուտները և դրանց կողմից իրականացվող գործառնությունները մեկ ամբողջության մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ մեր կողմից մշակվել է մոդել, որի հիմնական նպատակն է համադրելի տեսքով ներկայացնել ՀՀ ՄՄ ապահովմանն անհրաժեշտ ինստիտուտները և գործառնությամբ հիմնական ուղղությունները միասնական ամբողջության մեջ, ինչը պատկերավոր ձևով կներկայացնի վերջիններիս փոխկապվածությունը միմյանց հետ՝ որոշակիորեն արտացոլելով նաև ՄՄ համակարգի բաղադրամասերի ներքին կապերը:

Մոդելը կառուցվել է այն սկզբունքի հիման վրա, որ պետական համակարգի համար գերակայություն է հանդիսանում ՄՄ առջև ծառայած հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործառնությունների իրականացումը, որոնց առանձնահատկություններով էլ պայմանավորված պետք է լինեն ՄՄ ապահովմանն անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգի կազմն ու կառուցվածքը: Ելնելով այդ սկզբունքից՝ մեր կողմից, նախևառաջ, ՄՄ երեք հիմնական ենթահամակարգերի (ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, տեղեկատվական) հիմնախնդիրների վերհանման և վերլուծության հիման վրա դուրս են բերվել ՄՄ ապահովմանն անհրաժեշտ գործառնությունները կամ գործառնությամբ ուղղու-

թյունները, որոնք խմբավորվել են ըստ յուրաքանչյուր ենթահամակարգի:

Մոդելում յուրաքանչյուր գործառույթ (կամ գործառութային ուղղություն) զբաղեցրել է մեկ տող: Այնուհետև, մոդելում ներմուծվել են *ԱԱ* ապահովման համակարգի առկա ինստիտուտները, որոնցից յուրաքանչյուրը մոդելում զբաղեցրել է մեկ սյուն, որից հետո, տողերի և սյուների հատման վանդակներում կատարվել են նշումներ, որոնց առկայությունը նշանակում է, որ տվյալ տողում գտնվող գործառույթը (կամ գործառութային ուղղությունը) պետք է իրականացվի հատման կետին (կամ կետերին) համապատասխանող ինստիտուտի (կամ ինստիտուտների) կողմից:

Մոդելի կառուցումը *ԱԱ* ապահովման համակարգի համար թույլ է տալիս հեշտությամբ բացահայտել, թե *ԱԱ* ապահովմանն անհրաժեշտ որ գործառույթներն (կամ գործառութային ուղղություններն) են, որ շարունակում են մնալ չապահովված: Դրա համար բավական է աղյուսակի մեջ նշել բոլոր այն գործառույթները (կամ գործառութային ուղղությունները), որոնք անհրաժեշտ են *ԱԱ* ապահովմանը՝ կախված տվյալ ժամանակահատվածում առկա սպառնալիքների ու վտանգների առանձնահատկություններից, և ներմուծել *ԱԱ* ապահովմանն անհրաժեշտ առկա ինստիտուտները և բաց մնացած գործառույթները (կամ ուղղությունները)՝ նրանք, որոնց իրականացման համար չեն լինի համապատասխան ինստիտուտներ, կբացահայտեն *ԱԱ* ապահովման համակարգի հետագա կատարելագործման և զարգացմանն անհրաժեշտ ուղիները:

Մեր մշակած մոդելը հնարավորություն է տալիս նաև բացառել *ԱԱ* ապահովմանն անհրաժեշտ գործառույթների (կամ գործառութային ուղղությունների) իրականացման բացթողումները և/կամ կրկնությունները՝ այդպիսով բարձրացնելով *ԱԱ* ապահովման համակարգի արդյունավետությունը:

ԱԱ ապահովման համակարգի գնահատման վերը նկարագրված մեթոդը, անշուշտ, չի կարելի համարել անթերի: Այդ թերություններից հիմնականում նշենք այն, որ կիրառելով այս մեթոդը՝ կարելի է ստանալ միայն ընդհանրական, մակերեսային դատողություններ, և այն, որ այդ դատողությունները հիմնված կլինեն բացառապես քանակական համեմատությունների վրա, այսինքն՝ կստանանք համեմատական վերլուծություն «ինչ կա» և «ինչ պետք է լինի» համատեքստում: Ակնհայտ է, որ այսպիսի մոտեցումը չի կարող ամբողջությամբ արտացոլել իրականությունը: Սակայն, *ԱԱ* ապահովման համակարգի առկա կառուցվածքի այսպիսի մակերեսային համադրումը անհրաժեշտ գործառույթների համալիրի հետ թույլ է տալիս բավական հստակ պատկերացում կազմել *ԱԱ* ապահովման ինստիտուցիոնալ համակարգի հետագա զարգացման հիմնախնդիրների և բացթողումների մասին:

Մեր առաջարկած մոդելն ունի ևս մեկ կարևոր առանձնահատկություն: Մոդելում ներմուծված *ԱԱ* ապահովման համակարգի ինստիտուտների ցանկում ներառված չէ ՀՀ Ազգային ժողովը: Դա արվել է այն դատողության հիման

վրա, որ *ԱԱ* ապահովմանն անհրաժեշտ ցանկացած գործառնություն (և/կամ գործառնությունն ուղղության) իրականացումն այս կամ այն ինստիտուտի կողմից անպայմանորեն պետք է ուղեկցվի համապատասխան իրավաօրենսդրական դաշտի ապահովմամբ, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ ԱԾ առաքելությունից ու գործառնություններից: Նշված մոդելը ներկայացված է ստորև՝ *գծապատկերներ 1, 2 և 3-ում*:

Այսպիսով, *ԱԱ* ապահովումը պահանջում է ընդհանուր առմամբ 53 գործառնությունների կամ գործառնությունն ուղղությունների հետևողական և պատշաճ իրականացում թվով 43 ինստիտուտների կողմից: Բացի այդ, մոդելից ակնառու է դառնում, որ յուրաքանչյուր գործառնությունն ուղղության իրականացման գործընթացում ներգրավված են 1-ից ավելի ինստիտուտներ, իսկ որոշ ուղղություններ պահանջում են գրեթե բոլոր ինստիտուտների ներգրավվածություն: Սակայն այստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մեկ գործառնության իրականացման համար բազմաթիվ ինստիտուտների ներգրավումը չի ենթադրում տվյալ գործառնության իրականացմանն անհրաժեշտ աշխատանքների հավասարաչափ բաշխում այդ ինստիտուտների միջև: Մոդելում ներառված բոլոր ինստիտուտները կարելի է դասակարգել երկու ենթախմբերի.

- ինստիտուտներ, որոնք տվյալ գործառնության իրականացմանը մասնակցում են անմիջականորեն և տվյալ ոլորտում պետական քաղաքականության հիմնական իրականացնողներն են,
- ինստիտուտներ, որոնք տվյալ գործառնության իրականացմանը մասնակցում են միջնորդավորված, և նրանց ազդեցությունը տվյալ գործառնության իրականացման գործընթացին կրում է օժանդակող բնույթ:

Ինչպես նշեցինք, *ԱԱ* ապահովման հիմնական պատասխանատվությունը դրված է պետության՝ որպես քաղաքական համակարգի, կենտրոնական ինստիտուտի վրա, ուստի վերը նշված առաջին խմբին պատկանող ինստիտուտները պետական մարմիններ են, իսկ երկրորդ խմբին պատկանող ինստիտուտները՝ հասարակական և պետական իշխանությամբ չլիազորված այլ կառույցներ: Սակայն ասվածը չի նշանակում, թե մոդելում ներառված բոլոր պետական մարմիններն առանձին վերցրած գործառնության իրականացմանը մասնակցում են բացառապես որպես հիմնական (անմիջական) մասնակիցներ. նրանց մասնակցությունը գործառնությունների իրականացմանը հաճախ կրում է օժանդակող, միջնորդավորված բնույթ: Իսկ հասարակական կառույցները, ի տարբերություն պետական մարմինների, հանդես են գալիս միայն օժանդակող գործառնություններով:

Կառավարման գործընթացի արդյունավետ իրականացման տեսանկյունից մեծ կարևորություն ունեն կրկնակի կատարված աշխատանքների բացառումը (ինչը թույլ է տալիս կատարել ռեսուրսների խնայողություն) և տվյալ

գործառույթի իրականացման շրջանակներում տարբեր ինստիտուտների կողմից ընդունվող կառավարչական որոշումների աստիճանակարգի սահմանումը: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ներկայացված մոդելում ներառված գործառույթները/գործառութային ուղղությունները հիմնականում կրում են ընդհանրական բնույթ, և վերը նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում որոշակիորեն հստակեցնել նաև նշված գործառույթի իրականացման գործընթացում ներգրավված ինստիտուտների դերակատարումը՝ կիրառելով այս մոդելը յուրաքանչյուր առանձին գործառույթի համար և մանրամասնելով անհրաժեշտ միջոցառումներն ու համապատասխան ինստիտուտների աշխատանքային բաժանումը:

Մեկնաբանելով վերը բերված *գծապատկերներ 1, 2 և 3-ը*՝ հարկավոր է ընդգծել, որ դրանք մեկ միասնական մոդելի բաղկացուցիչ մասերն են, և դրանց տարանջատված ներկայացումը կրում է պայմանական բնույթ: ՄԱ ապահովման գործառութային-ինստիտուցիոնալ մեկ միասնական մոդելի մշակումը թույլ կտա նաև բացահայտել ՄԱ երեք հիմնական ենթահամակարգերի անվտանգության ապահովման առանձին գործընթացներում ներգրավված ինստիտուտների մասնակցության ուղղությունները մյուս ենթահամակարգերի անվտանգության ապահովման գործընթացներում:

Գլոբալացման ներկայիս պայմաններում աշխարհաքաղաքական նոր զարգացումները կարող են այնպիսի տարաբնույթ սպառնալիքների առաջացման պատճառ հանդիսանալ, որոնց դիմակայմանն անհրաժեշտ գործառույթները խորթ են թե՛ պետության և թե՛ հասարակական կառույցների համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱ ապահովումը պարբերականություն և հետևողականություն պահանջող գործընթաց է, կարելի է ասել, որ նման պայմաններում պետությունը պետք է կարողանա ճիշտ որոշել, թե որ ինստիտուտը կամ ինստիտուտները պետք է ներգրավված լինեն նոր սպառնալիքների դիմակայման ու չեզոքացման գործընթացներում: Պետությունն անհրաժեշտության դեպքում պետք է կարողանա նաև որոշել, թե որ ինստիտուտին կամ ինստիտուտներին է առավել նպատակահարմար պատվիրարկել լրացուցիչ լիազորություններ առաջացած խնդիրների լուծման համար:

Մայիս, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Ս.Մարգարյանի զեկուցումը ՀՀ ԶՈՒ-ի հրամանատարական կազմի համար, Եր., 16 փետրվարի 2005:

2. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Եր., 2007:
3. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության իրականացման վերաբերյալ», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2-3 (52-53), Եր., 2007:

О ПРОБЛЕМАХ ФОРМИРОВАНИЯ ИНСТИТУЦИОНАЛЬНОЙ СИСТЕМЫ, НЕОБХОДИМОЙ ДЛЯ ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

Сюник Татевосян

Резюме

Важнейшими целями развития цивилизации на различных этапах ее существования было достижение все более высокого уровня жизни, обеспечение благополучия и безопасности. Эти приоритеты сохраняются и сейчас, в начале XXI в., однако значение безопасности в характеристике качества жизни в наше время значительно возросло. Можно уверенно утверждать, что обеспечение всесторонней безопасности личности, общества, государства и мирового сообщества стало приоритетом ближайших десятилетий и превратилось в одну из главных целей стратегии существования цивилизации в современных и прогнозируемых условиях.

Обеспечение национальной безопасности (НБ) следует рассматривать как единый системный процесс, в основе реализации отдельных составляющих которого должен лежать принцип содействия реализации стратегических целей НБ. Для должного обеспечения НБ государство, как центральный институт политической системы, должно сформировать соответствующую институциональную систему, с уточненными функциями и приоритетами, отдельные составляющие которой должны располагать соответствующими человеческими, финансовыми, управленческими, а также идеологическими ресурсами.

Основываясь на принципе, согласно которому вышеуказанная система должна действовать соответственно приоритетам НБ, можно отметить, что она не должна быть статичной и изменения в ее структуре и действиях должны быть продиктованы изменениями приоритетов НБ. В этих условиях возникает необходимость разработать инструменты, которые позволят целостно рассмотреть все институты, вовлеченные в процессе обеспечения НБ, и их функционирование.